

Երաժշտ. Էլմ. 113

1. Եթե կյանքի մրրկից հոգիդ ընկճված,
 Հոռի ամպերով է ճամփադ մթագնած,
 Հիշի՛ր Տիրոջ պարգևած ողորմությունն,
 Պիտ հիանաս՝ միտք բերելով սուրբ Արյուն:

Տիրոջ գութն ու բարիքներն հիշի՛ր
 Եվ դրանք ամենուրեք պատմի՛ր,
 Միտք բեր և տես՝ առատ Նա բաշխեց,
 Կհիանաս, թե ինչպես Նա կատարեց:

2. Արդյո՞ք հոգսի բեռն է խեղճ հոգիդ ճնշում,
 Ծանր վիճակն է դառնությամբ սիրտդ ճմլում,
 Երբ հիշես Տիրոջ գութ, պիտ աչք բարձրացնես,
 Կնետես կասկածների, գովեստ կերգես:

3. Տեսնես հարուստի երկրավոր բարիքներ,
 Իսկույն հիշի՛ր երկնքի քո մեծ գանձեր,
 Տերը բոլոր կարիքներիդ պիտ հոգա,
 Ոսկուց շատ թանկ է, ինչ որ Նա քեզ կտա:

4. Քաջացի՛ր հոգով, արդ Քրիստոսին Նայի՛ր,
 Նրա ուժով բոլոր վշտերդ ամոքի՛ր,
 Նրա ողորմությունը պահի՛ր քո սրտում,
 Կգտնես հանգիստ քո երկրավոր կյանքում: